մարդ, որն ազատել է գորտը օձի բերանից[63], կամ մի մարդ, որը ոտքով անց է կացել Արաքսը մեկ ափից մյուսը[64]։ Երբ այսպիսի մեկը բացակա էր լինում գյուղից, վերցնում էին նրա հրացանը և ծննդկանին անց էին կացնում այդ հրացանի և նրա կաշվե փոկի միջով։ Կտուրի վրա արորը քանդում էին և մասերը անջատում, սպասելով, որ նմանապես երեխան կանջատվի ծննդկանից[65]։ Միջոցներից մի քանիսն էլ բխում էին այն մտայնությունից, իբր երկունքի ժամանակ ներկա են լինում ֆաշկէրը և ճալէրը[66], որոնք ամեն կերպ աշխատում են վնասել ծննդկանին և դժվարացնում են երեխայի լույս աշխարհ գալը։ Այդ պատճառով դժվար տղաբերքի ժամանակ տատմերը գծում էր ազատվող կնոջ շուրջը հատակին շամփուրով մի շրջանագիծ, գծում էր երբեմն նաև օդի մեջ, կամ նրա շուրջը գցում էր մի սիջիմ, չվան, պարան, որ ճալը՝ չար ոգին նրա վրայով անցնել չկարողանա և մեջը խճճվի։ Հավատում էին, որ ճալը ապրում էր ծննդկանի և նորածնի ջիգՙերավ՝ լյարդով։ Օդի մեջ շրջան գծելիս տատմերը երեք անգամ գիծը անց էր կացնում հացը կամ սուր երկաթե շիշը ձեռքին բռնած։ Դժվար տղաբերքի ժամանակ նաև սկսում էին հրացան արձակել՝ սովորաբար հերթիկով տանիցը դուրս, աղմուկ բարձրացնել՝ չարքերին հեռացնելու համար։ Ներս էին բերում ձի և տան մեջ պտտեցնում, որ նա իր սմբակների տակ նրանց կոխոտի. գնում էին գետի ափը և դաշույնը մի քանի անգամ ցցում ջրի մեջ կամ հրացանը ջրի մեջ արձակում, որ վիրավորեն, խողխողեն սովորաբար այնտեղ ապաստան գտնող չար ոգիներին։ Կամ քանի որ նրանք ձգտում էին ծննդկանի լյարդը հանել ու տանել—վերցնում էին այծի լյարդը և հերթիկով դուրս շպրտում, որ ճալէրը խաբվեն, լյարդը վերցնեն ու հեռանան։

Ազատվելուց հետո էլ չար ոգիները հանգիստ չեն տալիս ծննդկանին։ Տատմերը, եթե դժվար րոպեին այդ արած չէր, շտապում էր նրա շուրջը գիծ գծել կամ սիջիմ ձգել անկողնու շուրջը, և ապա մի հրացան, մի սուր, մի պողպատե իր երեք անգամ անց էր կացնում ծննդկանի շուրջը և օդի մեջ անցկացրած այդ երևակայական օղակով նրան պաշտպանելով՝ իրը դնում էր նրա բարձի տակ կամ կախում գլխավերև։

Ծննդկանը չպիտի մնար սենյակում միայնակ կամ կանանց ընկերության մեջ։ Միշտ մի տղամարդ էլ պիտի լիներ նրա սենյակում։ Վերկենալուց հետո էլ կինը, ինչպես և նրա ամուսինը, մոտ 15 օր չպիտի բոբիկ ոտքը կպցներ գետնին, որպեսզի այդտեղ վխտացող ֆաշկէրն ու ճալէրը չբարձրանային ծնկներով, ոտներով և պիտի ման գար մի շամփուր կամ դաշույն ձեռքին, սուր ծայրով ծակոտելով հատակը։ Այսպես և Զանգեզուրում, ինչպես և հայաբնակ բոլոր այլ գավառներում, նաև Կովկասի այլ ժողովուրդների մեջ ծննդկանը համարվում էր միշտ չար ոգիներից վնասվելու վտանգին ենթակա, ինչպես և նորածին երեխան։ Աշխատում էին ծննդկանին մենակ չթողնել, եթե ոչ՝ խրպէպրուշ, խրպէփուշ կամ խափրփուշ[67] կոչված ոգիները կարող էին նրա վրա

---

63 Ասել է թե՝ այդ մարդու մեջ եղած զորությունը կազատի նույնպես երեխային մոր արգանդից։

64 Ուրեմն՝ նա կօգնի նաև երեխային անցնել մեկ ափից մյուսը, արգանդից այս աշխարհը։

65 Ողջի։

66 Հմմտ. Ալ կոչվող չար ոգու հետ։

67 Խաբել բայից։